

կապածենաւքն, եւ ամենայն կանանաւքն, եւ հանդերձ տիկնանց տիկնան, եկն եհաս ի սահմանս Յայոց. խճողեաց ելից զերկիրն առ հասարակ: 12 Յայնմ ժամանակի ազատագաւրքն նախարարացն Յայոց առեալք զհարաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ի կողմանս Յունաց անգանէին, գոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն: 13 Ապա իբրեւ զայս ամենայն լսեր թագաւորն Յունաց, նոյնաւրինակ եւ նա զիւր զաւրսն գումարեր. եւ չու արարեալ զայր հասաներ յերկիրն Յայոց ընդդէմ թագաւորին Պարսից: 14 Եւ եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքան. եւ ինքն ընտրեաց իւր արս երկուս զլխաւորս, արս իմաստունս հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն եւ զԱնդովկն. զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին: 15 Եւ այսպէս հանդերձ նոքաւք ինքն իսկ կայսրն ի շինականութեան կերպարանս ի կաղամբավաճառի աւրինի, մտաներ ի բանակն Պարսից:

16 Իբրեւ եր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ¹, եկին մտին ի բանակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զաւրութիւն զաւրացն: 17 Եւ անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. զային հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղուջ բանակեալ ի պղերգութեան յանհոգութեան յանկասկած խաղաղութեան: 18 Ապա հասեալ ի տուընջէն² ժամուն, անկանէին ի վերայ թագաւորին Պարսից, ընդ սուր զամենայն բանակն հանէին, եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէին: 19 Եւ առին զկապուտ զաւար բանակին, եւ զկանայս թագաւորին եւ զբամբիշն, եւ զբանսկան ընդ նոսին, եւ զինչս եւ զստացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին, զկանայս նոցա եւ զգանձս եւ զկեանս³ եւ զկազմած նոցա: 20 Բայց միայն թագաւորն պրծեալ մազապուր, պէշասպիկ⁴ մի սուրհանդակ առաջի, պրծեալ ելաներ փախստական. հագիւ ուրեմն կարեր անկանել հասանել յաշխարհ իւր: 21 Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուանի պերճացեալ ի մէջ բանակին երեւեալ. զայր ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին, եւ զայլ ամենայն ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց: 22 Եւ ի վերայ երկրին թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ եւ զԱրշաւիր, մեծապարգեւ մեծապատիւ մեծարեր. եւ յանձն արարեալ զնոսս ամենայն իշխանացն եւ զաշխարհն նոցա, եւ ինքն կայսրն չու արարեալ զնաց յերկիր իւր յերկիրն Յունաց:

1 Օրինակ մի՝ Տոխայ

2 Օրինակ մի՝ տուընջեան

3 Թերեւս զկահս

4 Օրինակի միում՝ պէշասպիկ